

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Հահան Ռ. Պերպերեան ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՁԸ ԵՒ ԳՈՐԾԸ

«Ժողովուրդները չեն ապրիր միայն իրենց միւրեղէն ուժով, ոչ ալ իրենց վաղացուկ փառքովն ու հմայքովը։ Որպէս զի կարենան ամոնք տեւել՝ աներաժեշտ է նաև եղողեկան ազդակը, իրենց մտքի եւ արուեստի ճիգը, իրենց ԱԶԳԱՅԻՆ ՄԾԱԿՈՅԹԸ։»

«Կոմիտաս» Երաժշտական Միութիւն

Այսպէս Պուքրէջի «Կոմիտաս» Երաժշտական Միութեան հրատարակչութիւնը, 1936 Հոկտեմբեր 22-ին, դիմում է իր ընթերցողին տպագրելով Շահան Ռ. Պերպերեանի «Կոմիտաս Վարդապետ, Անձը եւ Գործը» աշխատանիքը։ Խճճն բիւրեղեայ մի գործ, որ ամրողապէս իրաւոնք է տալիս հայ բոլորից երաժշտական փիլիսոփայ, քազմաշնորհ գիտնական Շահան Ռ. Պերպերեանին դասելու արդէն իսկ անուանի Կոմիտասագէտների շարքին։ Հեղինակի՝ արտաքինից նիհար այս գործի մէջ, լիովին ներկայացուած է մեր ժողովուրդի համար նուիրական ու բացառիկ մի անհատականութեան՝ Կոմիտաս Վարդապետի կեանիքի դրաման, մասնագիտօրէն գնահատուած՝ երաժշտի կատարած տիտանական աշխատանիքը, բայց առ բայլ վերլուծուած՝ նրա ստեղծագործական ողջ ուղին։ Առանց վերապահութեան կարող ենք ասել, որ Շահան Պերպերեանի սոյն աշխատանիքը նորովի լոյս է սփռել հայ ազգի հանճարեղ փառքերից մէկի՝ Կոմիտաս Վարդապետի անձի ու գործի վրայ։ Ճշմարիտ է, թէ Կոմիտասի կեանիքի ու գործունեութեան շուրջ կէտ դարձ շատ աւելի ինչ՝ ստեղծուել, ուսումնասիրուել, գրուել են քազմարիւ մասնագիտական ուսումնասիրութիւններ, լուրջ աշխատութիւններ եւ այնպիսի անուանի երաժիշտ-երաժշտագէտների կողմից՝ ինչպիսիք են Ռ. Արաեանը, Ռ. Թերլեմեզեանը, Ա. Շահվերդեանը, Ն. Թահմիզեանը, Թ. Էլուեանը, ինչպէս եւ Ս. Դասպարեանը, Կ. Բրուտեանը, Յ. Ասատուրեանը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Թորգում Արք. Մանուկեանը, Ա. Զավանեանը եւ շատ ուրիշ հայ եւ օտար հեղինակներ։ Ուրեմն ի՞նչ կարող է աւելացնել Շահան Պերպերեան իմաստակը արդէն եղածին։ Եւ ինչպէս պատահեց որ իմաստակը, հոգերանը, արուեստագէտը, մանկավարժը, այս անգամ իր շնորքն ու հմտութիւնները տեղափոխում է երաժշտական ասպարէզ։ Ի դեպ, իմաստակը ոչ միայն երաժշտագէտ է, այլև ինքնուրոյն ստեղծագործող երաժիշտ, որ սակայն մի ուրիշ առանձին ուսումնասիրման նիւթ է։ Շահան Պերպերեանը ի՞ր կեանիքով ու գործով լուսաւորիչ է, նուիրեալը իր ժողովուրդի լայն զանգուածների զարգացմանն ու վերելին, ուստի երաժշտութիւնը, որպէս մշակոյքի մէկ կարեւոր մաս չէր կարող վրափի նրա ուշադրութիւնից։

Կոմիտասը յայտնագործեց հայ ազգային երաժշտութիւնն ու երգը։ «Հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն», տպագրած է Կոմիտաս Վարդապետ «Ազատամարտ»-ի 1913 թուի մէջ, իսկ Շահան Պերպերեանը իր փայլուն գրութեամբ փաստած է, թէ հայն ունի երաժշտութեան Ակատումամբ ինքնուրոյն փիլիսոփայական մօտեցում։ Գիտնականի վերոյիշեալ յօդուածը իր բնոյրով անշուշտ իմաստափական չէ, սակայն հեղինակի համար Կոմիտասի յայտնագործումը եղաւ շրջադարձային, ազդելով նրա հետագայ գործունեութեան եւ իմաստափական մտածողութեան վրա։

«Կոմիտաս Վարդապետ, Անձը եւ Գործը» միայն հետազոտութեան արդիւմ չէ, այլ ինչպէս ասեցինք, յայտնատեսութեան շողարձակումով յայտնագործութիւն, մի մեծ գիւտ ոչ միայն ի՞ր այլ բոլորին համար։

Կոմիտասագիտութեան մէջ արժեքաւորը ըստ իս՝ Շահան Պերպերեանի մտածողութեան, Կոմիտասին մօտենալու նո՞ր ձեւն է։ Իմաստակը այս աշխատանիքը

ներկայացնելու մեր փորձը առաւելաբար կեդրոնացնելու է հեղինակի կողմից Կոմիտասի անձի ու գործի ընկալման՝ եւ այդ ընկալումը արտայայտելու, քան գործի երաժշտագիտական արժեքը բննելու վրայ: Խորքի մէջ, մեր ցանկութիւնն է Կոմիտասին նուիրուած այս աշխատանքով աւելի պարզել ու ծանօթանալ իմաստասէք Շահան Պերպէրեանին:

Ցայտնի է, թէ գիտնականի իմաստասիրական մտածողութիւնը որոշ չափով պայմանաւորուած է, իր ուսուցիչ Փրամսացի մեծանուն իմաստասէք Ա. Բերկոնի հայեացներով, սակայն միւս կողմից անուրանալի է Կոմիտաս Վարդապետի դերը Շահան Պերպէրեանի աշխարհընկալման, արուեստագիտական ըմբռնումների, ազգային ինքնագիտակցութեան ձևաւորման մէջ:

Իմաստասէքի վրայ Կոմիտաս Վարդապետի քողած ազդեցութեան մասին, արդէն յիշել ենք մեր «Շ. Ռ. Պերպէրեան, կեանին եւ գործունեութեան համառօտ ակնարկ» յօդուածում, ուստի կը շարունակենք մեր պրատումները այս ուղղութեամբ, որ պիտի նպաստի հեղինակի անձի ու գործի նաևաշման ու նիշտ արժեւորմանը:

Ա. Բերկոնմը եւ Կոմիտաս Վարդապետը եռգեմտաւոր այն միջավայրն էին, ուր ծնուեց ու հասունացաւ իմաստասէք ու բազմաշնորհ գիտնական Շ. Ռ. Պերպէրեանը: Արիստոտելեան բնորոշումով պէտք է ասենք, որ այս երկու հսկաներով է պայմանաւորուած հայ իմաստասէքի մտքի բարայրի տրամագիծը, որտեղից նա նայում էր իմաստասիրութեան երկնէին: Լուսաւորիչ մտաւորականը ոչ միայն նայեց այդ երկնէին, այլ իր ուսանողների, ունկնդիրների եւ ընթերցողներին առջեւ դրեց իր ամբողջ հմայենք: Ուստի հարց է ծագում, որչափ կարող ենք մենք այսօր տեսնել ու ըմբռնել, հետազոտելով Շահան Պերպէրեանի այս գրութիւնը, ի՞ր ենթատողերով:

Ցողուածը սկսում է «ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏԸԸ» գլխով: Շահանի եւ Կոմիտասի հանդիպումը տեղի է ունեցած արուեստի հիմքանուն կոբողների, ժամանակաշրջանի ստեղծագործական մտորումների մայրաքաղաք Փարիզում: Այստեղ է որ Շահան Պերպէրեանը յայտնագործեց Կոմիտասին եւ նրա միջոցով հայ տոհմիկ երաժշտութիւնը, որը հետագայում մեծ խանդավառութեամբ փոխանցցեց եւ ի՞ր ժողովուրդի զաւակներուն, ի մասնաւոր սփիւրքահայութեան: Պերպէրեանի իմաստասէքի սուր հայեացքը կարողացաւ բափանցել Կոմիտասի եռգու խորքը, այնուղիւն տեսնելու ոչ միայն ամբարուած ու մշակուած հայ ցեղի ուրոյն երգն ու երաժշտութիւնը, այլև հայոց պատմութեան յաւերժացումը: Շահան Պերպէրեանը գիտակցեց ու գնահատեց Կոմիտասի հանճարը ու նրանով իսկ գտնուած մնայուն արժեքները, եւ զանաց ամէն կերպով ազգային արժեքները փոխանցել ժողովորդի լայն շրջաններուն: Եւ իմաստասէքը լուսաւորչի առաքելութիւնը իրապէս կրօնականին յատուկ զատագովական ոգիով կատարեց:

Դիտնականը Կոմիտասի անձի ու կատարած գործի մէջ տեսաւ ազգի կայացումի ու յարատեւութեան երաշխիքը: Ցանձին Կոմիտասի գտնուած էր հայ երաժշտութեան Մաշտոցը: Միանգամայն ընդունելի է, որ դարերի միջոցաւ եկող տոհմիկ երգն ու երաժշտութիւնը այն հոգեկան ազդակներից մէկն է, որով շարունակում է ազգի գոյութիւնը, գրում է օրուայ պատմութիւնը: Իսկ Պատմութիւնը Պերպէրեանի համար հաւաքական հոգու ազատագրումն է նիւթականից ու հաստատումը «հաւաքական ներքին բանձրական տեսլութեան», ինչպէս հետագայում պիտի կոչեր հեղինակը: Ի դեպ, իմաստասէքի մօս այս գաղափարը աւելի ձեւալորտում է «Երկու ժամանակներ» յօդուածի մէջ: Պատմութիւնը երաժշտականացուում է, օղակ-օղակ կապուելով եւ իրաքանչիւր յաջորդ շրջամ իմաստալորտում է մախորդով:

Կոմիտաս Վարդապետը գտնելով, մշակելով ու դաշնաւորելով հայ երգն ու երաժշտութիւնը՝ այսպէս ասած յայտնագործելով լսելի երաժշտութիւնը, պատմութիւնը տեսականացնելու օրէմքը:

Խմաստասէրի համար Կոմիտասի գործը ազգային պատմութեան բնական ու անհրաժեշտ շարունակութիւնն է, մեր պատմութեան համանուագի յաջորդ բաժինը, աւելի ազդեցիկ ու զօրեղ բաժինը: Շահան Պէրպէրեանի «Կոմիտաս Վարդապետ», Անձը և Գործը» յօդուածը մեզ ներկայացնում է որպէս յայտնագործում Կոմիտաս երաժշտի, յայտնագործում հայ երաժշտութեան և նոյն ընթացքով յայտնագործում ինքներս մեզ: Ցողուածի մէջ կարդում ենք հայ ապագայ տաղանդաւոր խմաստասէրի, մեծ մտածողի ազնիւ խոստովանութիւնը: «Խնչ էր այն ատեն ինձ համար իմ ցեղիս երաժշտութիւնը: Խնչպէս կ'արժենորդի զայն երաժշտական խնձմտանեմիս մէջ. իբրև աւելի քան արհամարհելի քանակութիւն մը:» (էջ 10) Եւ ապա՝ «Այսպէս իբրև հայ չէի խորհեր անգամ հայ իրաւ երաժշտութեան մը գոյուրեանը՝ ուր մնաց համարձակիլ անոր կարելիութիւններու և իրաւունքներուն անդրադառնալու»: (էջ 11)

Սյս՝ խոստովանութիւնն է հայ գիտակից մարդու, որ ուզում է ծանօթանալ իր ազգային երաժշտութեանը, որ փնտում է հայ երգը, փնտում ինքն իրեն:

Եւ ահա.«Այս պայմաններուն մէջ էր որ, իրիկուն մը, իրաւէր մը ստացայ Օր. Մարգարիտ Բարայեանէն իր բնակարանը գտնուելու, ինն «Հայաստանէն եկած հայ երաժշտութեան վարդապետ» Կոմիտաս Վարդապետը նանշնալու համար: Թերահաւատ՝ գացի:

«Եկաւ Վարդապետը: Գեղեցիկ չէր: Նոյնիսկ պիտի ըսեմ հակառակը՝ իր սե երկայն որտէնկորդին բռնագրոսիկ պաշտօնականութեանը մէջ: Իր ոսկրուտ դէմքով ինձի կը յիշեցնէր Սոկրատի ինչ ինչ դիմաքանդակները:

«Պահ մը վերջը սակայն, երբ տրուցաւ ինձի լսել իր մատներուն տակ յանոն առաջին ներդաշնակութիւնները դաշնամուրին, ու մանաւանդ իր արձակած առաջին երկարածիգ կանչերը մեր ամենի ու քաղցր լեռներէն կարծես փրքած՝ խորհեցայ վերստին Սոկրատին, բայց այս անգամ Պղատոսին այն էջին վերյիշումով, ուր Պղատոն զայն կը նմանցնէ Արենացի քանդակագործներու աշխատանոցներուն մէջ տեսնուող այն խոչոր, տգեղ ու տարօրինակ «Սիէն»ներու քանդակներուն՝ որոնք պահոցներ են սակայն, կ'ըսէ, որ երբ բացուին, ասուուածներու վեհօրէն գեղցիկ արձանիկներ յայտ կը բերեն:

«Այս մարդը, խորհեցայ, Սոկրատին պէս ասուուածային ոգիին իշեւան մըն էր իր այդ կերպարանքին ետեւ:» (էջ 11)

Շահան Պէրպէրեանը՝ դարձած հայ նոր Պղատոն, ընթերցողին է ներկայացնում երաժշտութեան «Սոկրատին» ու մեծ մարդում՝ Կոմիտաս Վարդապետին: Խմաստասէրի հետ կատարում է տարօրինակ մի երեւյր՝ «յայտնատեսութեան մը լոյսին տակ կատարուած «դարձ» այս կարելի է կոչիլ» և ինքնուրեան յայտնաբերում ու վերադարձ արմատներին: Եւ մի այնպիսի վերադարձ՝ երբ մարդը ոչ թէ բայցում է դէպի անցեալ, այլ անցեալն է մօսեցնում ներկային: Որովհետեւ վերադառնալ արմատներին, նշանակում է բրերել դամբարանները, փոշիէն սրբել հիմ ոսկորները, բայց այժմ վերադառնում են արմատները, իրենք են գալիս դէպի մեզ որպէս յարուցեալներ:

Դառնանք Պէրպէրեանի խոստովանութեան «Հայ երաժշտութիւն մը, երաժշտութեան ամենահարազատ տեսակէն, կը յայտնուէր մէկէն ինձի, հեռաւոր, խորունկ, ցեղային ալֆերուս մէջ արձագանքներ արթընցնելով: Նոր, ու այնքան իին, խսկութիւն մը՝ որ կը փոխէր երաժշտական եւութիւնս, զայն կը շրջէր կարծես: Վարդապետին արուեստագիտական անձին մէջէն, մէկէն, դէմյանդիման կը գտնէի ինքնինքն ամբողջ երաժշտական հայրենաշխարհի մը, որուն հպարտ էի ես ալ հեռաւոր կերպով զաւակը եղած ըլլալու: Կը զգայի հիմա որ ցեղս ունեցեր է «իր

* Կոմիտաս Վարդապետ Անձը և Գործը, Նիւ Եորք, 1969, 145 էջ: Այսուհետեւ այս աշխատութիւնից մէջբերում կատարելիս տեխստում՝ փակագծերում նշելու ենք միայն այս հրատարակութեան էջը: Առաջին անգամ աշխատանքը հրատարակուել է Պուլքէ, 1936ին:

երգը» որ արժանի էր հնչելու ուրիշ մեծ ժողովուրդներու բարձրագոյն ստեղծագործութիւններու համերգին մեջ, դեռ եւս համեստ՝ գործերու գիծերու արտաքին մեծութեամբը, բայց գեղեցկութեան էն իրաւ որակին շինուած:- Հայ երաժշտութեան համար Սողոսի մը պէս մտեր էի այդ բնակարանը, այն իրիկուն, ու Վարդապետը զիս կը դրկէր ես, իր առաքեալի եռութեամբը ինծի դպած՝ իբր Պօղոս մը ըրած ինձմէ:

«Անկէ վերջ իր հետեւողն էի այլ եւս. հայ երաժիշտ հոգիի մը համար չէր կարելի զինքը նանջնալ ու ըլլալ իր «աշակերտոց» (էջ12)

Սյափիսով Շահան Պէրպէրեան առաջին իսկ հանդիպման ընթացքին Վարդապետի հետ, «մկրտում» է հայ երաժշտութեան աւագանի մեջ, համոզուելով որ իր ցեղի երգը նոյնպէս արժանի է մաս կազմելու միւս ազգերի համաշխարհային ստեղծագործութիւնների փաղանգին:

Այդ օրուանից Շահան Պէրպէրեանը դառնում է Կոմիտասին «չաշակերտած» լաւագոյն աշակերտն ու հետեւողը:

Իմաստասէրը յօդուածի հետագայ մասերում հանգամանօրէն ներկայացնում է Կոմիտասի կեանքին, որ կենսագրական տուեալներով նորութիւն չի հաղորդում, բայց իսրահինակ է հեղինակի մօտեցման կերպը: Արդէն առաջին նախադասութեամբ ասուած է ամէնը. «Կը սորվէի Վարդապետին կեանքը: Տարօրինակ, բազմադեպ, ու պարզ միանգամայն, ներքին գիծին ուղիղութեամբը» (էջ12):

Զծանրանպի համար, կը բողնինք մեծ երաժշտի կեանքի հանրածանօրհանքունները:

Յօդուածի երրորդ մասը՝ վերնագրուած «ՏԵՍԱՆՔԸ» իմաստասէրը նուիրած է Կոմիտասի կեանքին, որ կենսագրական տուեալներով նորութիւն չի հաղորդում, բայց իսրահինակ է հեղինակի մօտեցման կերպը: Արդէն առաջին նախադասութեամբ ասուած է ամէնը. «Կը սորվէի Վարդապետին կեանքը: Տարօրինակ, բազմադեպ, ու պարզ միանգամայն, ներքին գիծին ուղիղութեամբը» (էջ12):

«ՏԵՍԱՆՔԸ» վերնագրուած մասում հեղինակը իրաւացիօրէն գտնում է, թէ նախ Կոմիտասը ներկայանում է իրեւ հայ երաժշտութեան մեծ տեսարան՝ մեծատաղանդ երաժիշտ որ կարողացաւ պատմութեան խորքից գտնել ու դուրս բերել հայ ցեղի երգը: Եւ սակայն ո՞րն է այն գաղտնի ուժը եւ երաժշտին «առաջնորդող Գաղափարը» որ բոյլ տուեց կատարելու հայ հիմաւորց երգի ու երաժշտութեան յարութիւնը նոյն կենդանի շնչով ու կեանքի բարխումով, որ ունեցել են դարերի յարութիւնը նոյն կենդանի շնչով ու կեանքի բարխումով, որ ունեցել են դարերի ընթացքին: Որոնելով «առաջնորդող Գաղափարը» եւ ոգին որ մդած է Կոմիտաս Վարդապետը երաժշտագիտական հետագոտութեան, իմաստասէրը նշում է. «Կոմիտաս Վարդապետի այս հմտական ու տեսարանական որոնումներուն արժէքը հասկնալու համար, հարկ է զանոնք ըմբռնել իրենց առաջնորդող Գաղափարին ու ոգին մեջ, որ կը տարրերի սովորական հմտութեան մը տուն տուող սկզբունքներէն: Մեր գրականութեան ու զանազան արուեստներուն մասին եղած բանասիրական ու հնարանական աշխատութիւնները շատ անգամ ամուլ եղած են, բանասիրական ու հնարանական աշխատութիւնները շատ անգամ ամուլ եղած են, գործերուն բուն իսկ արուեստագիտական հասկացողութեան եւ մեր նոր ստեղծագործութեան կարելինութիւններուն տեսակետով, որովհետեւ անոնց մէջ ստեղծագործութեան կարելինութիւններուն տեսակետով, որովհետեւ անոնց մէջ սնդհանրապէս հմտութիւն կայ հմտութեան համար լոկ: Գործերու բուում, բուաբնդիանական կարգութիւն, ժամանակագրական նշդում, անոնց արտաքին ու նիւթական կարգութիւն, ժամանակագրական նշդում, անոնց արտաքին ու նիւթական նկարագրութիւնը, անոնց մէջ տեսնուած օտար ազդեցութիւններու եւ տարրերու յայտնաբերում. ահա ինչ-որ շատ անգամ ըրած են ու կ'ընեն մեր եւ ուրիշ ազգերու բանասէրներն ու հնարանները» (էջ17):

Շահան Պերպէրեանը գմահատում եւ կարեւորում է այս կարգի աշխատանքները, որոնք սակայն «արտազեղագիտական» են, անհրաժեշտ՝ միայն «քաղաքական ու քաղաքակրթական պատմութեան տեսակետով»: Այս գործերում պակասում է բուն ստեղծագործութիւնը: Ստեղծագործական աշխատանքում կարող են գտնուել օտար փոխառումներ, օտար տարրեր:

Բայց «Խնդիրը այն է թէ ի՞նչպէս այդ բոլոր ինքնեկ կամ օտարամուտ տարրերէն էապէս նոր ու ինքնատիպ ստեղծագործութիւն մըն է կատարուեր: Խնդիրը այդ իւրացնող ու նորաստեղծող ուժին օրենքները, նկարագրը, ոգին ի յայտ թբրելն է: Այն ոգին որ իւրաքանչիւր իրաւ ստեղծագործութեան խկութիւնն իսկ է, եւ որո՞վ բան մը կ'արժէ այդ գործը, հակառակ բոլոր փոխառութիւններուն, եւ որո՞վ իրապէս կարելի է հասկնալ այդ գործը: Այս խկութեան գիւտը միւս կողմէ մեծ արժեք կրնայ ներկայացնել ազգային արուեստի նոր իրագործումներուն համար, որովհետեւ կենդանի աւանդութեան մը ինքնատիպ ոնին մէջ նամբայ մը կը ցուցնէ նոր ստեղծագործողներուն:

«Կոմիտաս Վարդապետի երաժշտագիտական որոնումները այս ոգիով եւ ուղղութեամբ կատարուած են, ու ասկէ կու գայ անոնց անկշռելի կարեւորութիւնը»:(էջ 18)

Կոմիտասը գտաւ «նորաստեղծ ուժին օրենքները», ինքնատիպ ոնք, որ գախս է նաև ազգի ուրոյն նկարագրից: Վարդապետը իր ուսումնասիրութիւնների առարկայ արեց նաև դրացի ժողովուրդների, «Քիւրտերուն, Արաբներուն, Պարսկներուն, Վրացիներուն, եւ Բիւրկանդական երաժշտութիւնները»: Այժմ յայտնի է որ երաժշտի 4000 ից աւելի նօրագրութիւններում եղել են նաև Ռուսական երգերի մշակումներ եւ մեղեդիներ: Կոմիտասը նախ եւ առաջ յայտնաբերած է ազգերի մերժիմ երգը, կամ այլ կերպ ասած՝ կենդանի պատմութիւնը, ապրուող պատմութիւնը: Խստի մա կարողացել է դարերի ամշրաբսից համել ու վերստեղծել, նորաստեղծել ցեղի երգը, որովհետեւ այդ երգը շարունակում է հոգիների մէջ: Քանի որ յայտնագործուած է հայ երաժշտութեան ստեղծագործ ուրոյն ոնք, ուրեմն (ինչպէս պիտի տեսնեն հետագայ շարադրանքում), գտնուած է եւ նրա կատարման ոնք, որ պէտք է լինի արձագանքը ժողովուրդի պատմութեան, մտածողութեան, կենսակիրպին:

Նորաստեղծող ոգիով Կոմիտաս Վարդապետը հաւաքեց, գրի առաւ ու դաշնաւորեց հայ երգարուեստի բազմաժանր հարստութիւնը՝ գեղջկական-քնարական երգերը, պանդխտութեան երգերը, աշխատանքի երգերը: Այսպիսով Կոմիտաս Վարդապետ վերահաստատեց հայ ազգագրութեան հիմքը: Նոյն միասնական հիմքի վրայ բարձրանում է հայ հոգեւոր երաժշտութիւնը: Վարդապետը բացայատեց հոգեւոր երաժշտութեան ոնային յատկանիշները, ուսումնասիրեց եւ միշնադարեան հոգեւոր երգեր, շարականներ, ստեղծեց Պատարագի տարբերակներ: «Ու այս բոլորը կատարուած են ոչ թէ լոկ հայ երաժշտութեան ինքն իր մէջ հասկացողութեան համար, այլ նաև անոր արդիական վերամշակութեան եւ նոր ստեղծելի գործերուն ինքնատպութեան մտահոգութեամբը:- Որովհետեւ եւրոպական թէլինիքով նոր հայ երաժշտութիւն մշակելու գործին մէջ հայ երաժշտութեան ինքնուրոյն օրենքներուն տգիտութիւնը անցյան, կամ պարզապէս եւրոպական բնաւորութեամբ գործերու պիտի առաջնորդէր հայ երաժիշտները: Եւ ընդհակառակը, ինչպէս Կոմիտասի ըլլայ կրօնական, ըլլայ ժողովրդական երաժշտութեան դաշնաւորման պարագան է այդ, հայ երաժշտութեան յատուկ օրենքներուն եւ նկարագրին իրական նանաչումը պիտի թբրէր, հակառակ եւրոպական թէլինիքի գործածութեան, էապէս ինքնատիպ հայ ստեղծագործութիւններ, որոնք ատով իսկ ու ատով միայն արդէն, եւրոպական նաշակին համար ալ նոր, իրապէս շահեկան գործեր պիտի ըլլային:»(էջ 19)

Վերոյիշեալի մէջ համոզուելու համար, Շահան Պերպէրեանը ասում է. «Կը բաւէ բաղդատել Հայ Պատարագի Կոմիտասեան եւ նկարական դաշնաւորումները»:

Հատ իմաստասէրի, Մակար Եկմալեանի պատարագը շատ յատկանիշներով զիջում է Կոմիտաս Վարդապետի մշակումին:

Վարդապետի ձգած ժառանգութեան մէջ մեծ արժէք են ներկայացնում հայ երաժշտութեան կշռական կառուցուածքի՝ ութմիկ (rhythmique) օրէնքի բացայայտումը, ամանակի, շշշտադրութեան, միջնադարեան խազերի ուսումնասիրութիւնը: Տահան Պէրպէրեանը խոր եւ մասնագիտորէն վերլուծելով Կոմիտասի տեսական նշանակութիւն ունեցող աշխատանքները, հիացմունքով յայտարարում է. «Կոմիտաս Վարդապետի երաժշտական հետազոտութիւններուն այս արդինեֆները մեծ եւ լրսաւոր հորիզոնները կը բանային Հայ ցեղի ոչ միայն երաժշտական կազմութեանը, այլ եւ Հայ պատմական, ազգագրական անցեալի հասկացողութեան տեսականիվ: Ցայտնի կ'ըլլար որ Հայոց ժողովրդական երաժշտութիւնը կու գար ամենանին, նախարիխտոննեական աւանդութեանէ մը, որ հայոց փոփոխականարիական ծագումին նոր ու արտասովոր փաստեր կը բերէր: Բարիզի մէջ 1914ին գումարուած երաժշտագիտական համաժողովին մասնակցող երաժշտութեան գիտունները մեծ յայտնութիւններու առջև գտած էին իրենք զիրենք, Վարդապետին հաղորդագրութեան մէջ առաջ բերուած իրողութիւններովը: Անոնց լոյսին տակ հայ երաժշտութիւնը կը ներկայանար որպէս այն սակաւարի արուեստներէն, որոնք կորսուած էին յունական եւ արիական երաժշտութեան մասին կենդանի գաղափար մը տալու կոչուած էին:» (էջ 25-26)

1914-ին Փարիզում գումարուած միջազգային երաժշտագէտների գիտաժողովում, Կոմիտասի զեկոյցը՝ որի մասին յիշտակում է Պէրպէրեանը, ունեցաւ միանձամայն գիտական ու պատմական նշանակութիւն: Ցանձին Կոմիտասի, հայ երաժշտութիւնը իր ամբողջ հմայքով տարածուեց օտար երաժշտագէտի եւ ունկնդրի առջև: Եւրոպայի ունկնդիրը ուղղակի սեանչացաւ հայ երգի «արեւելիան ննկուչութեամբ», որ «արեւոտութիւն մը կրելով հանդերձ, մեղկ չէ բնաւ, արիական ուժի եւ յատակ ձերի նկարագրով մըն ալ՝ որ մասնաւեղ կը երապուրէ զմբեց» (էջ 25): Խմաստասէրը գտնում է որ Կոմիտաս Վարդապետի աշխատանքները օգտակար են թէ ազգագրութեան, թէ երաժշտարուեստի իմաստով: Եւ հայ «արեւոտ» երգը փայլում է «արիական ուժ»ով, փաստելով ծագումը մեր ժողովրդի:

«ՅՈՒՆՈՂԸ» վերնագրին տակ իմաստասէրը բացայայտում է Ստեղծագործող Կոմիտասին: Նա սկսում է հարցադրումով. «Ի՞նչ եղաւ արուեստագէտին, յօրինող Կոմիտասին: Նա սկսում է հարցադրումով. «Ի՞նչ եղաւ արուեստագէտին, յօրինող Արտեստագէտին արժէքը Կոմիտասի մէջ» (էջ 26): Խմաստասէրը անմիջապէս հերքում է այն կարծիքը թէ, «Կոմիտաս Վարդապետ յօրինող Երաժիշտ մը չեղաւ, չկրցաւ ըլլալ երբեք, կ'ըսեն, այլ երգեր հաւաքող մը եւ դաշնաւորող մը միայն ու պարզապէս» (էջ 26): Սյո, Կոմիտասի յօրինումները շատ չեն: կը նշէ հեղինակը, սակայն. «Կարող չէ՞ր, չախտի՞ ըլլար Վարդապետը, տարաքախոս Վարդապետը, իր քուն իսկ անձնական ստեղծագործութիւնը բերելու Հայ Երաժշտութեան: Պետք չէ վնելի, չենք կրնար վնելի»: (էջ 26) Դժուար է հասկանալ, թէ ինչ նկատի ունի Պէրպէրեանը «անձնական ստեղծագործութիւն» ասելով, յայտնի է թէ Կոմիտասի ստեղծագործութիւնների գերակշիռ մասը սերուած է հոգեւոր ու ժողովրդական երաժշտութիւնից, թերեւս իմաստասէրը «անձնական ստեղծագործութիւն» ասելով հասկանում է այն գործերը, որ յիշուած սկզբաղրիւրից անկախ են, որոնք իսկապէս քուով շատ չեն:

Կոմիտասը կարեւոր ու անյետաճգիի աշխատանք ուներ կատարելու, եւ կեանքից շատ կանուխ զրկուեց, մանաւանդ կորցրեց բանական-ստեղծագործական կեանքը, երբ իի էր աւինով:

«ՅՈՒՆՈՂԸ» բաժնում, Տահան Պէրպէրեանը հանգամանօրէն կանգ է առնում Վարդապետի մի շարք ստեղծագործութիւնների վրայ: Խօսելով «Անուշ» օրերան Վարդապետի մի շարք ստեղծագործութիւնների վրայ: Խօսելով «Անուշ» թումանեանի գրելու Կոմիտասի մտադրութեան մասին, նա գրում է. «Յովիաննես Թումանեանի «Անուշ»ին վրայ օրերայի մը պատրաստութեան որուն համար կը խորհեր յօրինել

նոր, հայկական նուագախումբ մը, եւրոպական գործիքներու մէջէն ընտրելով եւ անոնց միացնելով հայկական ու արեւելեան գործիքներ, սրինգներ մասնաւրարար: Ի՞նչ պիտի ըլլար այդ գործը՝ պատճառներ ունիմ կարծելու թէ մեծարժեք պիտի ըլլար: Ինձի երգած ու նուագած է անոր նախերգանքը եւ խոր տպաւորութիւն եմ կրած:» (էջ 27)

Հետաքրքական է որ արեւելեան եւ նուագական խառը գործիքաւորուած նուագախմբեր իրապէս հետագայում ստեղծեցին, ունկնդրին ներկայացնելով որպէս յաշող արուեստագիտական իրագործումներ: Այնուամենայնիւ, Վարդապետի շխացրած գործերի կողին եղան հասուն յօրինումներ, շնորհալի ու բարձր մասնագիտական նաշակով: Աներկրայ կարելի է հաստատել որ Երաժշտ Վարդապետի բայոր ստեղծագործութիւնները եւ մշակումները ինքնին կրում են նրա արարող հանճարի դրոշմը: Շահան Պերպէրեանը գրում է. «Կոմիտաս Վարդապետի այսպէս մեզի բերած հայ եղանակը իր բնական պայծառութեամբը, եւ իր առնացի կորովովը, իր մաքուր զգաստութեամբը յայտնապէս արեւմտեան-արիական է, բայց եւ իր արեւահամ ֆնէշութեամբը, իր երազայնութեամբը՝ արեւելեան միեւնոյն ատեն: Ու ի վերջոյ ո՛չ այդ եւ ո՛չ այն. ինչո՛ւ ըլսել մէկ բառով՝ հարազատօրէն ու ինքնուրոյնապէս հայկական է. հայկական միսդիքէ մը բխած:» (էջ 28)

Նրա իմաստասիրութիւնը ամենուր հակուած է գտնելու, տեսնելու նշմարիտը, բարին, գեղեցիկը, խորհրդաւորը՝ «միսդիք»ը: Սրանք կազմում են Շահան Պերպէրեանի երաժշտականացուած իմաստասիրութեան գլխաւոր մեղեդին: Ինչ է այս տեղ «հայկական միսդիք»ը՝ խորհուրդը, այն մեր ժողովրդի ստեղծագործ ոգու բիումն է, ոգի որ գիտէ իր մէջ սխանչելիօրէն ներդաշնակել ու շաղկապել ենմ ու նորը, «արեւահամ», «երազային» արեւելեանն ու իրապաշտ, «արեւմտեամ-արիական»ը:

Կոմիտասը գտաւ, պահեց ու շարունակեց այս խորհուրդը: Հայ երաժշտութիւնը չեղծուեց՝ հանդիպելով «եւրոպական ներդաշնակութիւններու առաջին հպատիմն»: Մեաց մաքուր ու պարզ ակնաղրիւր, մեաց այնպէս ինչպէս երգուի եր հայ գեղջուկի, հայ կրօնականի շուրբերով: Կոմիտասի համար «եւրոպական մերու»ը մեաց «մերու» իւ մօտեցում, եւ ոչ կաղապար, որով պէտք է ծեփէր հայ երաժշտութիւնը: Անցաւ վտանգը, որով. «Մեր երգերու շունչը կրնար խեղդուի եւրոպական գիտուն ներդաշնակութիւններուն ծանր փարաբումն մէջ: Հայկական ազատ լեռներուն վրայ բուսած ու ապրող այդ փոքրիկ վայրի երաժշտական ծաղիկները ի՞նչ պիտի ըլլային իրենց հողէն փրցուած ու մեծ բաղաբներուն երապական արուեստի պալատներուն փարբամ ծաղկամաններուն մէջ բերուած:» (էջ 29)

Պերպէրեանը բերում է երաժշտագէտի «հանճարեղ լուծում»ի բանալին. «Պէտք է ըսել որ Կոմիտաս Վարդապետ իրապէս հանճարեղ լուծում մը գիտցաւ բերել այս հարցին: Նախ, պատշաճագոյն ընտրութեամբը այն ներդաշնակութիւններուն եւ ներդաշնակային շրայումներուն՝ զօրս գործածեց ժողովրդական թէ եկեղեցական եղանակներու իր բազմածայն խմբագրութիւններուն մէջ: Ներոպական դասական ներդաշնակութիւնները եւ շրայումները չեն անոնք, ինչպէս է պարագան օրինակ Եկմալեանի պատարագին մէջ: Դասական երրեակին միօրինակ գործածութիւնը այսպէս, ըսի արդէն, որ պիտի եղծէր այդ երգերուն ներդաշնակայինի կարողութեան գոյ նկարագիրը, շատ անգամ ու հետզիւտ աւելի վտարուած է այդ դաշնաւորումներէն: Փոխարէն, յանախ բառեակի կամ հնգեակի վրայ հիմնուած դաշնակներ եւ մանաւանդ նոր հականչուն (dissontant) դաշնակներ գործածուած են որոնք բարերախտօրէն կը շեշտեն այդ երգերու յատուկ ներդաշնակային դիմագիծը:» (էջ 29-30)

Հեղինակի այս վերլուծումների մէջ ի յայտ է գալիս մասնագէտը, իրաւ երաժշտական արուեստի բոլոր մարզերին ծանօթ իմաստասէրը: Պերպէրեանը «հանճարեղ լուծում»ի որպէս երկրորդ քայլ նշում է. «Եթույ՝ դաշնաւորման համար իր գործածած խմբագրութեան եղանակովը: Պատշաճօրէն բարեխառնուած

համեղանակային (*contrapointique*) կերպն է այդ, «ուղղաձիգ գրելակերպին դեմ հրիդոնական գրելակերպը», որ բազմաձայնութիւնը ձեռք կը բերէ ոչ թէ մայր եղանակին տակ պարզապես դաշնակները դմելով այլ այդ մայր եղանակին ընկերացնելով ուրիշ՝ բայց անոր բնութենէն սերած, անոր ազգական մեկ կամ աւելի եղանակներ. ու այսպէս մայր երգին շուրջը յօրինուած եղանակներու փունջով մը տալով մեզի բազմաձայնութիւնը: Դաշնաւորելու այս բազմեղանակային (*polyphonique*) կերպը որ յատկանշական է եւրոպական նոր համանուագային (սիմֆոնիկ) ոճին, կը պահէ հայ երգերուն՝ իրենց էապէս մեղեդիական (*melodique*) հանգամանքը: Այդ ընկերացող եղանակները Վարդապետին սեփական ներշնչեալ յօրինումներն են, որոնց իւրաքանչիւրը մայր եղանակի ի կարողութեան գոյ մեկ երեսը երեւան կը բերէ, կ'իրագործէ, հետեւարար ոչ միայն չի խեղդեր, չի խեղարիւրեր անոր ոգին, այլ զայն աւելի բազմակողմանիօրէն կը վերըստեղծէ, զգալի կը դարձնէ, կը նոյնացնէ, ամրողովին կը ցայտեցնէ:» (էջ30)

Կոմիտասի յաջողութիւնը կայանում է ոչ միայն «Եւրոպական նոր համանուագային» ոճի կիրառումով «հայ երգերուն» վրայ, այլև ի՞ր երաժշտութեան նկարչագեղութեամբ: Վերոյիշեալ «հանարեղ լուծում»ի երրորդ հանգրուանն է, կամ աւելի նիշտ երրորդ պայմանը՝ Վարդապետի «քանաստեղծ-նկարչ-երաժիշտ» լինելը: Կոմիտաս երգերի մեղեդին ծուլած է խօսին, եւ նրանք միասին ստեղծում են կենդանի երաժշտական պատկեր, ունկնդիրին հաղորդելով այդ երգը ծնող հարազատ միշավայրի շերմութիւնը: Հայ ժողովրդի դարաւոր պատմութիւնը, ի՞ր բնաշխարհով, ի՞ր ողջ ու մեռած բնակիչներով ոգեհինացած է երաժշտութեան կերպի տակ: Կոմիտասով հայոց պատմութիւնը, հայ կեանքը, վարքն ու բարքը երաժշտականացաւ: Այն բարախուն է ու իրական, այն յաւերժական է, որովհետեւ վեր է նիւթականից: Պերպերեանը գրում է. «Ու վերջապէս, երգերուն դաշնաւորումին մէջ իր բերած երաժշտական նկարչագեղութեան, *pittoresque*, տեղական գոյնի մտահոգութեամբը» որ խմբերգական հնչականութեան զմայլիի գիւտերով այդ երգերուն շուրջ պահել յաջողեցաւ անոնց բնիկ միշավայրը, մքնոլորտը, երաժշտական կիման կարծես:» (էջ30)

«Երաժշտական կիման» արտացոլում է միշավայրը, այն ունի հոտ, ունի գոյն: Եւ ահա գեղջկական-բնարական երգերը արձագանքում են ունկնդիր հոգու մէջ, լսում են լիուներէն հոսող սառնորակ աղքիւրների գլուղը, մեղմ հովին տնեղը, անսպասելիօրէն հնառուրի եռանդը փոխանցում է մեզ, մենք ապրում ենք անոնց հետ: Մենք յանկարծ բռնում ենք պարի՝ տարուելով հարսանեաց երգերի քմրուկների ուրախ ութմէն: Վարդապետի վերլուծումով. «Կոմիտասի դաշնաւորումներուն մէջ գլխաւոր երգին շուրջ, այսպէս, երբեմն ոգեխոչուած կը գտնենք երգին արթնուցած արձագանքները, պիտի ըսէիր հայ սարալանջներուն վրայ («Սարերի վրով գնաց»-ին կամ «Կալերգ»ին մէջ). պարի եղանակներուն ընկերացող պարի ժայերուն ու քմրուկներու բափահարումը («Հով լինի»ին, «Սօնա նար»ին, «Առաւոտուն բարի լուս» սեանչելի հարսներգին մէջ այսպէս). գեղջկական բակին՝ կրուղ այծերուն զանգակիներուն հնչիւնին անորոշ արձագանքները» «Հինգ էծ ունիմ» կոչուած փոքրիկ գուլի գործոցին մէջ. այիներու բաղը վէտվէտումը իր մէկ ուրիշ գուլի գործոցին՝ «Լուսնակն անուշ»ին մէջ:» (էջ31)

Կոմիտասի դաշնաւորումների մէջ վիշտն ու ուրախութիւնը, տառապանքն ու վայելքը, մեկ խօսքով ժողովրդի կեանքը իր բոլոր երեսներով իրար ամրողացնող, կենդանի պատկերներ են - բոլոր իրականութիւն: Ամէն հերոս, ցանկացած կենդանի եւակ ու բնութեան մի պատահիկ, ունեն ինքնուրոյն հնչիւնային ու երանգային հառագայրում: Շահան Պերպերեան արուեստագետի աշխից չեն վրիպում երաժշտական գունեղ «ալիքներու բաղը վէտվէտումը», որ արձագանքում են նրա հոգում:

Կոմիտասի հոգեւոր-եկեղեցական երաժշտութեան կալուածի մէջ կատարած աշխատանքներից իմաստաւորը առանձնացնում է «Հայաստանեայց նկեղեցւոյ պատարագը. մեծարժէք գործ»ը, բնական է անդրադառնայով նաև երաժշտի շարականների մշակումներին: Ի դեպ՝ նշելով Կոմիտասեան Պատարագի միակ տարրերակը, նկատի ունենալով ըստ երեսյրին 1933 թուականին Փարիզի մէջ երատարակուած, Պերպէրեանը իր յօդուածի տողատակում գրում է. «Պիտի ունենայինք ուրիշ պատարագ մը եւս որ պիտի ըլլար, ինչպէս կ'ըսէր ինք, իր կրօնական երաժշտութեան կարեւորագոյն երկը, այս անգամ խառն խումբի համար գրուած հնգամայն, վեցամայն, եւ կառուցուած Օր. էմի Սրբարի կողմէ երատարակուած Զուղայի Պատարագին մայր եղանակներուն վրայ, զորս Վարդապետը կը նկատէր ամենէն հարազատօրէն հայկական պատարագի եղանակները. պիտի ունենայինք՝ եթէ չպատահէր աղէտը: Այդ գործը կարեւոր մասերով գրուած է արդէն, բայց զարմանալի է որ անկէ ոչ մէկ հետք գտնուած է իր թուղթերուն մէջ: Ո՞ւր անհետացած է արդեօֆ այդ գործը:»(էջ32)

Պերպէրեանը յիշում է միայն մէկ պատարագի տարրերակ, սակայն յայտնի է թէ Կոմիտաս Վարդապետը մշակած է բազմամայն պատարագի մի բանի տարրերակ, որ սակայն չեն պահպանուած: Խսկ վերեւում յիշուած 1933 թուականին տպագրուած Պատարագը հրատարակուել է Վարդապետի շնորհալի աշակերտ՝ Վարդան Սարգսեանի շանքներով:

Այսպիսով, լինի կրօնական բնոյթի, կամ ժողովրդական սեռին պատկանող երաժշտութիւն, դրանք իմաստաւորի համար գլուխ-գործոցներ են, երաժշտական մանեակներ, որ ներկայացնում են «բռվանդակ կեանքը» հայ մարդու: Թէեւ ոչ նպատակադրուած, այնուամենայնի իմաստաւոր երաժշտական արուեստի գոհարն է որ բաժանում է հետեւեալ խմբերի՝ Աշխատանքի, Սիրոյ եւ երագի, Կարօտի, Դիցագնականի, Հաւատի, Պարերգի, Հարսներգի, Ողբերգի:

Պերպէրեանը «Վարդապետին Արուեստին մէջ վերստեղծուած, պայծառակերպուած, պայծառածայնուած» երգն ու երաժշտութիւնը գեղարուեստական բարձր ճաշակով պատկերելուց յետոյ եղրափակում է. «Հայ երաժշտութիւնը դարերէ եկած՝ Կոմիտաս Վարդապետին շնորհիւ, մէկ ոստումով՝ երաժշտական արուեստի բնաշըռութեան առաջացած գիծին վրայ տեղ կը գտնէր:

«Այս մեծ պատիւ մըն էր մեզ համար: Կը պարտինք զայն իրեն:»(էջ33)

Հեղինակը իր յօդուածին մէջ հանգամանօրէն անդրադառնում է նաև Կոմիտասի վաստակին՝ որպէս խմբավար եւ երգիչ-կատարող: Նրա գործի յաջորդ մասերն են «ԽՄԲԱՎԱՐԸ» եւ «ԵՐԳԻՉԸ»: Որչափ էլ որ երաժշտական գործը հանեարեղ լինի, անոր փայլը կը մարի երէ չգործադրուի, չկատարուի լաւագոյնս: Եւ երբմն հակառակը՝ միշակ երաժշտական երկը կարող է գերել ունկնդիրը, երբ կատարուած է տաղանդաւոր խմբավարի առաջնորդութեամբ: Կոմիտասը ունէր Կեկավարի տաղանդը ամբողջութեամբ. «Այս տեսակէտով իր ըրածը պարզապէս հրաշքի սահմաններուն կը մօտենար» (էջ 33): Վարդապետը իր արտասովոր շնորհենք եւ հմտութիւններով, մինչեւ իսկ անուս ու «մշակումէ գուրկ» երգչախումը ի գօրու էր հաշուուած օրերու մէջ վերածելու առաջնակարգ երգչախումը, որովհետեւ «իր սորվեցնելու եւ վարելու կերպը գիտենք որ ապշեցուցիչ էր»: (էջ 33)

Այստեղ միայն երաժշտական հմտութիւններն ու վարպետութիւնը բաւարար չեն. «Ասոնցմով՝ նիշդ բայց պաղ եղանակաւորումի մը ու բազմամայնութեան մը միայն կարելի է հասնիլ», իսկ «երաժշտական բուն յափշտակութիւնը ստանալու համար, ասոնցմէտ անդին գտնուող տեսակ մը մոգականութիւն անհրաժեշտ է, որ իիշ վարիչներու միայն տրուած շնորհ մըն է: Ու այդ շնորհը ունէր՝ բացառիկ աստիճանով մը՝ Վարդապետը» (էջ 34):

Խմբավար Կոմիտասը կը դիւքէր թէ երգչախումը կատարողները, եւ թէ անոնց ունկնդիրները, լինեին նրանք հայ կամ օտար, երաժշտագէտ կամ պարզ

հանդիսաւուս: «Ու այսպէս՝ Մեծ Խամդավառութիւնն էր յափշտակուած ամբոխ-ներուն, որ ծափահարութիւններուն մէջ ա'լ կ'որոտար, կ'որոտա՛ր ու չէր դադրէր: Նրեմն ցեղը բովանդակ արթնցած կ'ըլլար կարծես այդ պահերուն՝ հայ բազմութիւններուն մէջ: Մոռցուած ցեղը, որ յանկարծ կ'ելլար սրտերուն մէջ, կ'երգէր արիւնին մէջ ու արցունք կը դնէր անհամար աչքերուն:» (էջ34)

Սյո, կ'երգէր, համահունց հայ հոգու երաժշտութեան, անկեղծ ու մաքուր: Կոմիտասը «արցունք կը դնէր» ունկնդիր աչքերուն, ինչպէս վաղորդեան օդը ցողեր՝ լեռնաշխարհի մեր ծաղիկներու վրայ: Վարդապահտը գիտէր ինչպէս արթնացնէր հայ մարդու մաքուր արցունքը եւ կենսախնդութիւնը. հերիք էր դպչել կատարողների հոգիների պրկուած լարերին, որպէս զի ներքին ապրումները երաժշտականցած դուրս յորդէին: Երգը՝ ժողովուրդի, հայ մարդու հոգին է, այժմ հնչեղ, լսելի դարձած:

Կոմիտասը՝ հայ երգի, երաժշտութեան հարազատ մեկնարանն էր. Աա իրապէս կարող եղաւ արտացոլելու հայ հոգին, որպէս մեղեդի ու երգ: Վարդապահտը երաժշտականացը մեր ժողովուրդի խառնուածքը, հայրենի բնաշխարհը, ազգի պատմութիւնը՝ իր վերիվայրումներով, յայզերով ու մարդկային ապրումներով. այս ամէնը յաւերժացան որպէս երաժշտութիւն:

Վարդապահտի համար երաժշտութիւնը «ցեղի ոգին» է, ժողովուրդին կենդանութիւն տուողն, ինչպէս հոգին՝ մարմնի: Երգը անժակտելիօրէն կափց հայ ժողովրդի անցեալը, ներկան ու ապազան: Ծահան Պէրպէրեանի իմաստափութեան համաճայն, որպէս զի չընթեատուի ազգի գոյուրդինը, մեր պարագային՝ հայ ցեղի լինելիութեան ընթացքը ժամանակի ու տարածութեան մէջ, անհրաժեշտ է անխ պահպանել ընթացքը հոգեւոր՝ ներքին ոլորտի մէջ: Հայ երգի ու երաժշտութեան պահպանումն ու ստեղծագործ շարունակութիւնը ազգի գոյուրթեան երաշխիքներից մէկն է:

Ծահան Պէրպէրեանը արժենորելով Կոմիտասը որպէս խմբավար, համոզուած կերպով յայտարարում է. «Վարդապահտը անկասկած մեր ժամանակի առաջնակարգ եւ բացառիկ երաժշտական դեկալարներու գիծին վրայ կու գար» (էջ35):

Մի միտք, որ ժամանակին եւ այսօր հաստատում են հայ եւ օտար միջազգային նանաչում ունեցող բազմաթիւ երաժշտագէտներ:

Իմաստասէրը գտնում է որ Կոմիտասը «Մեծ եղաւ՝ իրբեւ խմբավար, թերեւս անոր համար ալ էր այդ, որ մեծագոյն եղաւ իրբեւ երգիչ»: (էջ35)

Նրա մեծութիւնը սոսկ գեղեցիկ ձայնային տուեալները չեին. անշուշտ տիրող, «խոռվիչ», «մաքուր ու պայծառ» էր ձայնը. «Բայց այս բալորը կը չխանային իր երգուածքին նկարագիրը կազմող արտայայտականութեան եռվ: Ու ասոնք ալ տակաւին՝ այն անասելի ջերմեանդ հոգեկանութեան եռվ որ իր երգուածքին ներյատուկ բռիչքը, վեհութիւնը, միսրիքը կը կազմէր: Զայն մը չէր այդ՝ հոգի մըն էր:» (էջ 35-36)

Հոգին իմաստասէրի համար աւելի բարձր իրականութիւն է քան իմացականութիւնն ու զգայականութիւնը: Կոմիտասի ունեցածը, ասոնք է՝ նախ Հոգին է, ապա Զայնը: Կարելի է համաճայնել անշուշտ, որովհետեւ երաժշտութիւնը, երգը, միայն լսելի չէ, այլապէս թերհովենը պիտի չստեղծագործէր: Հոգին է որ յայտնաբերում եւ մատուցում է հայ երաժշտութեան ոնք: Իմաստասէրը գրում է. «Հայ երաժշտական ոնի իսկութիւնը իր յայտնատեսութեանը օգնութեամբ՝ յայտնատեսութիւն՝ որուն մասին ըսի՞ Կոմիտաս Վարդապահտ գուա ու թերաւ մեզի հայ երգումի բուն ու հարազատ եղանակը: Ոնք: Ատիկա ալ իր անկորընչելի փառքերէն մին պիտի մնայ:» (էջ36)

Այս տողերը գալիս են հաստատելու մեր ուրիշ առիթով առաջ բաշած այն կարծիքը, որ իմաստասէրի համար յայտնատեսութիւն նանաչողութեան ձեւ է, արուեստի մէջ դառնալում է ներշնչում ու խորհուրդ՝ «միսրիք»: Կոմիտաս որ արուեստի մէջ դառնալում է ներշնչում ու խորհուրդ՝ «միսրիք»:

Վարդապետը պարզի է հայ երգի կատարման ոնք, դառնալով ազգային երգեցութեան հիմնադիրը: Նրա մեկնարանած, կերտած ու մատուցած երգեցութեան կատարման ոնք, մի երեսն է մեր ազգային հոգեւոր ու մշակութային արժեքները արարող մեծ ոնի: Ոնային նոյն առանձնայատկութիւնները ունեն հայ գիրն ու գրականութիւնը, նարտարապետութիւնն ու նկարչութիւնը: Այս կապակցութեամբ իմաստասէրը, պարզում է իր միտքը. «Մանաւանդ հայ կրօնական երգին տրւցութեան, այսպէս ըսնն՝ Մերոպեան Ոնք գտած էր: Մերոպեան կ'ըսնէ, որովհետեւ հայ կրօնական երգը տայլու իր ոնք խորիրդաւոր հանգիստութիւն մը ունի Մերոպեան երկարագիրերու, մեր ոսկեղարու մատենագիրներուն՝ մեր նարտարապետութեան մեծ շրջանին կառուցուածքներու ոնին հետ. նոյն անսերեւեթ, կորովի, պարզօրէն շնորհալի, սրտագին ու միսրի խկութիւնը անոնց եւ իր երգուածքն մէջ: Այդ երգուածքին մէջ արեւելականութիւնը ի սպառ քօթափուած էր, բայց եւ չէր իշնար եւրոպական կերպին մէջ: Բուն իսկ հայ հոգին ու հաւատեն եկած սրտառուց ու աստուածաբորից բան մը ոգեղինութիւն կու տար անոր: Ուր էր թէ չկորսնցնեինք իր երգումի դպրոցը, իրմով մէջ մը վերագտնուած այդ երգչական Ոնք:»(էջ36)

Իմաստասէրի մադրանին ու փափաքը այսօր կը հնչեն որպէս ահազանգ, երբ Հայրենիքի եւ սփիւրքի մէջ աւելի կ'ուռենան ազգային ու էստրադային երգերի երաժշտականօրէն անգրագէտ ու խեղարթիւրուած կատարողները:

Ոնք արտայայտութիւնն է կրողի, ժողովրդի նկարագրի, յոյսի ու հաւատուի: Կոմիտասի մաքուր, հաւասարակշռուած երգի մէջ հայ մարդու կեանքի պատմութիւնն է տարածուած հայրենի բնաշխարհի մէջ, եւ ամէնը պատկերուած ու կատարուած՝ իրաւ արուեստագէտի նկարչագեղութեամբ: Այս մտքի վկան ու հաստատողն են կոմիտասագիտութեան յայտնի Փարիզեան մի ժամանակագրութիւնները՝ պահպանուած ցայսօր:

Որպէս աշխատանիքի համարութիւն, Պերպէրեանը ներկայացնում է «Անջը», ուր իմաստասէրը կարծես հանրագումարի է թերում կոմիտաս երեւոյթը իր բոլոր երեսներով:

Գիտնականը յայտարարում է. «Տեսարանին թէ յօրինողին, խմբավարին թէ երգիչն տակ միեւնոյն երաժշտական Անձը, միեւնոյն յայտնատեսական լոյսով լուսավառ մարդու էութիւնը կը ճառագայթէր: Կոմիտաս իր Անձը ամբողջ կը դնէր իր բոլոր ըրածներուն մէջ, իր խմբագրած յետին երգին երգած յետին շեշտին մէջ. ու հանճարի լոյս մը կը կրէր ապահովար այդ անձը իր մէջ: Ոչ անձնական հանճարի սակայն, եթէ կարելի է այսպէս ըսել, ու հոս է էական յատկանիշը իր պարագային, այլ ցեղային հանճարի լոյս մը:»(էջ 36-37)

Կոմիտասը էութեամբ ճառագայթող էր. արեւը այլ կերպ չի կարող: Նա կրող էր ցեղի հանճարի: Վարդապետի հանճարը կազմում է ամբողջական ու ներդաշնակ միութիւն արուեստագէտի ու հոգեւորականի. «Տեսակ մը անանձնական տեսողութիւն կ'առաջնորդէ զինքը իր գործին մէջ ու տեսակ մը անանձնական ոգեւորութիւն կը լիցնէ զինքը ու իր ամբողջ գործունեութիւնը: Այդ է գաղտնիքը այն Տեսանողի ու Առաքեալի նկարագրին, որուն գիծերով իր անձնաւորութեան պատկերը պիտի անցնի մեր պատմութեան: Ու ահա ինչու Արուեստագէտը և Հոգեւորականը ձուլուած եղան միշտ իր էութեամբ մէջ, միակուր ճառագայթ մը կազմեցին հոն: Հոգին կը կրէր իր մէջ, ու իր մէջ Հոգին: Սուրբ կը գգար. ատկէ՝ իր հաւատէր: Իր անձնաւորութեան շինուածքին ու բնաւորութեան տեսակէտով՝ իրեւ Ս. Սահակներու եւ Ս. Մերոպեաներու գիծէն դէմք մը անցած եղաւ Հայ նեանցին մէջէն Հայ Պատմութեան:» (էջ37)

Սակայն Հայ երաժշտութեան Ս. Մերոպի՝ Կոմիտասի թոփչը ընդհատուեց «Մեծ Ս. Ետիւնին» պատճառով: Թուրքի արիւնու ծեռքից ազատուած մնացորդացը, թէի մարմնապէս ողջ բայց հոգեպէս շարդուած է, անզգայացած. այդպէս էր եւ Կոմիտասի պարագային: Պերպէրեանը դառնացած հառաջում է. «Ախտը կոտրեց

փշուր փշուր, այդ Միութիւնը, իբր գերագոյն հեգնանք սակայն զինքը պահելով դեռ տարիներ մեր առջեւ, իբրև ինք իբրեն աննանաչելի նիւթեղէն ստուերը»: (Էջ37)

Կոմիտասի մէջ ապրում էր լոկ «նիւթեղէն ստուերը», այս «Մեծ Աղէտ»ը մի աւելորդ անգամ փաստեց, թէ բուրժի եաբաղանը մարմինները մասնատերուց, բգկտերուց առաջ կոսոր-կոսորի բաժնել էր մարդկային հոգինները, ապրողներին վերածելով կենդանի մեռելների: Թուրք շարդարաբներ փորձեցին չնշել ոչ միայն Հայաստանի բնիկ ժողովուրդը, այլև մեր ստեղծած մշակոյթը: Խեղաքիւրեցին նարտարապետութիւնը, անդամահատեցին գրականութիւնը, այլափոխեցին երաժշտութիւնը: Եթէ հայ բերդերն ու եկեղեցինների աւերակները արմատներով կառչեցին հարազատ հողին, ապա գիրքն ու երգը ստիպուեցին գաղթել իրենց ստեղծող ժողովուրդի մնացորդների հետ: Երգը գաղթեց, բայց շնորհի Կոմիտասի՝ ապրեց ու վերնձիւրուեց: Հարազատ երգ ու երաժշտութեամբ հայ հոգին վերագտաւ իր մերդաշնակութիւնը, զգայութիւնները ու նորից կապեց պատմութեան վրբուած ժամանակի թերի: Աղէտը անցաւ ու հայը սրափուելով՝ երաժշտութեան մէջ գտաւ իր կորցրած յիշողութիւնը, ասել է թէ գտաւ ի՞ր միութիւնը: Ի՞սկ Կոմիտասը... նա ոչ եւս է. «Մահը կու գայ սրբել այսօր այդ ստուերը: Ու յախտենութիւնը իրեն կ'առնէ Կոմիտասը ու միաժամանակ մեզի կու տայ զայն իր բուն եղածին պէս: Իրեն կ'առնէ ու մեզի կու տայ իր Միութեանը մէջ վերահաստատած հսկական՝ Հոգի-Կոմիտասը, հայ Երաժշտութան Սուրբ-Կոմիտասը:»

«Գիտնանք մեզ համար կենդանի ու ներկայ պահել զինքը»:

Խմաստասէրի եզրափակիչ խօսերը կարող ենք ասել եւ հենց ի՞ր համար:

Շահան Պէրպէրեանը լուսամիտ ու բոլորից երաժշտական հայ իմաստասէրը, իսկապէս լուրջ եւ միանգամայն տարբեր հայեցքից «շափեց» ու արթեւրեց Հայ Երաժշտութեան անշափելի հսկան՝ Կոմիտաս Վարդապատր:

Միանգամայն իրաւացի է ժողովրդական խօսքը, թէ անցնող սերունդի նկատմամբ վերաբերմունքը այն նշգրիս չերմաշափն է, որ ցայց է տալիս հասարակութեան, ընկերութեան բարոյական առողջութիւնը:

Ուստի, որպէս նորանկախ Հայրենիքի առողջ ժողովրդի զաւակ, նիշդ գնահատնեմք մեր անցած սերունդի լուսաւոր երեւոյքներից նաև այս մէկը՝ Շահան Ռ. Պէրպէրեան իմաստասէրը, բազմահմուտ գիտնականը ու Մեծ Անձը:

ԶԱՔԱՐԻՍ ՔՅՆՅ. ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

ԽՈԿՈՒՄՆԵՐՈՒ ՇՈՒԹԻՆ ՏԱԿ

*Մարդը նման է բոչունին:
Երկույն ալ դիւրաւ կը ճանչցուին:
Առաջինը՝ իր խօսէն,
Երկրորդը՝ իր երգէն:*

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ